ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
27 նոյեմբերի 2018 թվականի N 294-Ա

ՄԵՐԻ ԳԱՆԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2018թ. նոյեմբերի 23-ի N 02-130/8 գրությունը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդալյանին 2018թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը ներառյալ գործուղել ք. Ծաղկաձոր՝ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության քննությունների հիմնախնդիրները» թեմայով խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ նկատի ունենալ, որ Երևան-Ծաղկաձոր-Երևան տրանսպորտային, ինչպես նաև Ծաղկաձորում գտնվելու ժամանակահատվածում գործուղման ծախսերի հատուցումն ամբողջությամբ իրականացնելու է հրավիրող կողմը:

3. Մ. Գանդալյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ.նոյեմբերի 27
ք. Կապան